

— Իմալ օ իմ ջան բերեաներու մէջ ալ իմ ազգ չորս էս յըմալ նեղութենի մէջ ալ վրան ի Աստուծոյ սիրուն, դու մէկ չարամ էնիմ:

— Է՛, Օխան, էնի մի թագաւոր ալ աշխարհապետ ալ ես միճակ ունիմ սեքսան ջան, դու իմալ նեղ տեղ մը կտպեցիր ձիւ ես իմալ էնիմ:

— Ես կը յուսամ Աստուած, դու օ սրտով դըրպիս, Աստուած կը յաջողայ:

Ասաց—Դու օ էկար էն սեքսան ջան զուրբան կենիմ քու ու զուրին:

Ասաց.—Ես էլա էն յըմալ թուր մի կօծեմ օ Շամայ թալիս Ստամբուլ կառայ:

— Թէ, Աստուած զեք քերիմ էրաց խրա ձիւ իմ թուր կտռեց, ես էլա քու ազգ պաի տիրիմ, չու՛մ յաւուր դատաստանին իմ ձեռամբ հազանի պաի բռնիմ:

— Ես էլա թամպի կենիմ չուր յաւուր դատաստանին, նախուսի զլօս խարիր փարայ խարժ տայ իմ ազգ քեզի:

Օխան զազգ թալիմ էրաց, թուրն օծեց, տուեց Մամադին. էդ ապով Օխան Օծնելի կասեն:

Մամադ աշխարհ տուեր ա ուր առէջ ու կուգայ. շատ տեղ էդոր կտռեւորու աւերելու ձէն ցըվրու աւ. շատ տեղ էդոր ասկերի առէջէն կիտախն, կեղեն սարերը ընքը կուգէր զօրտու կզարներ, կտեսներ, դար ու դարտակ աներ մա. ինք զուր ասկերն էն յըմալ դատաստան կեներ օ, չեղի մէկ ասկար աւիրութենի յարով էթէր մաներ աներ:

Ջախիրայ օ պէտք էդեր, Մամադ ինք կերթէր քեզի դարտակ աներու մէջ, կը գներ պըրի հախ պըրի ամանի մէջ, ցորնի հախ ցորնի հոր կթալեր, ցանի հախ ցանանոց, ու կերթէր:

Կտռեց ու տաճկացուց, չուր խտտաւ Ռուս կուտար. Գնաց Կոստանոս թագաւոր, Կոստանոս բանէ խապար չունէր, նստեր էր ի Պալլու, ուրիկ կեր ու խու՛մ կէներ: Գացին, ապին. — Թագաւոր ապրած, Փաթի Մամադ էկեր, լցուեր ա Ստամբուլու մէջ, դու նստեր կեր ու խու՛մ կենես:

Թաւի մէջ էլա ձուկ կեր կարմրուկ, ա-

սաց.— Չը՛մ խաւատայ, էսա ձկեր օ սաղան թաւի մէջէն ջրի մէջ թռան, կը խաւատամ:

Ասու խրամանքով ձկներ թաւի մէջէն թրփ-թրփ թռան խաւուղի մէջ ընկան: Կոստանոսի գլխուց զինին թափաւ, նոր հաւատաց օղորթ ա:

Փաթի Մամադ լցուաւ Ստամբուլ, առաւ Այասօֆրան, Այակորիկին, ընցաւ Այաստաֆանու. Պալլուայ չորս բոլոր փաթեց:

Փաթի Մամադ մտաւ ի ներս, տաց Կոստանոսին. — Ի՞նչի թախտէն, խերիք ա. Աստուած քեզնէ առաւ:

Փաթի Մամադ, տաց, ձի չու՛մ ձեռ խօսոցին ժաման տուր:

Ասու խրամանքով ձեռեր թեւեր զարկին, չորեք զիմաց զըժըրժալէն զանէցին:

Դրա արեւ չէր մտեր. Կոստանոսին նոր խելք կտռեց օ Աստուած ուրնէ առաւ, տուեց Փաթի Մամադին:

Դարձաւ Կոստանոս ասաց.— Փաթի Մամադ, թախտ կուտամ, բայց իմ անուն չը կուրիսիս, սիքի (դրամի) մէկ էրես զիմ անուն զարկես:

Էս զրուցքէն Մամադի արարը ըռըքաւ. — Դըս օլոր-մըլոր կը թալայ, ասաց. քաշեց թուրը, Կոստանոսի վիզը թռուց:

Ստամբուլուց Փաթի Մամադ քշեց, Ռուսուճուլուց էլա վեց թագաւորի խող առաւ: Աստուծուց շատ փախեցաւ դարձաւ:

— Էսա էլա խերիք ա ընձի, ասաց:

Ամեն էլա մացին թուրքի ձեռաց տակը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Մի ուսումնական գոնդրափառ. Նորերիս Աւնեակում վախճանուել է Դանտէի քաջ տեղեակ Անտոնիօ Մասչիօն, որ յայտնի էր ոչ միայն Իտալիայում, այլ այդ սահմաններից էլ շատ հեռու. Դա իւր ամբողջ կեանքը նուիրել էր «աստուածային» բանաստեղծի ուսումնասիրութեան և պաշտաման. Ուսումնականները խիստ գովել են դորա զանազան հրատարակութիւնները Դանտէի մասին և «Դժոխք»-ի մեկնարանութիւնները:

Այդ պարզ նաւափարին վիճակուած բախտը

շատ հետաքրքրական է. Դա ծնունդ է 1825 թ. Վենետիկի մօտ Մուրանոյում: Խանութպան հայրը զորան տարաւ գիւղական ուսումնարանը: Բայց տղան շատ սէր չուներ ուսման համար և աւելի գերադասեց մնալ իւր հօր խանութում: 20 տարեկան հասակում Մասչիօն մի իշխանի գոնդօլափար դարձաւ: Բայց շուտով թողեց Վենետիկը և հացի կարօտ մնաց: Ապա հացթուխ դարձաւ: Բայց դարձեալ անյաջող կերպով: 1848-ին Անտոնիօն մասնակցեց Աւստրիայի առեւի լուծի դէմ հանած խռովութիւններին: միւսոյն ժամանակ օգնելով ծնողներին, որոնք դարձեալ իրանց փոքրիկ խանութով էին հայթայթում իրանց ոգեպահները: Մի օր իւր յաճախած թութուռի խանութում թղթի փաթեթներէ մէջ գտաւ ոտանաւորներէ թերթեր: որ հետաքրքրութիւնից սկսեց կարդալ: հաւանեց: թէ և լաւ էլ չհասկացաւ: Կարդացածն էր «Աստուածային կատակերգութեան» 13 և 14 հագներգութիւնները: Իսկոյն գոնդօլափարը մի քանի սօղիով գնեց հին գրքեր վաճառողից ամբողջ երկասիրութիւնը և օրուայ մի քանի ազատ ժամերը նուիրեց վիպասանութեան վերծանութեան: Եւ որովհետեւ ձեռքին ունեցած հրատարակութիւնը ծանօթութիւններ չուներ: ուստի նա աշխատում էր խրթին տների իմաստը ըմբռնել իւր գլխի խորհրդածութիւններով: որ և իրան լաւ յաջողուեցաւ: թէպէտ ինքն անկիրթ տգէտներից մէկն էր: նորա սկզբունքն էր. „Dante si spiega con Dante“ (Դանտէն Դանտէից պէտք է մեկնուի) և այդ սկզբունքի վերայ հաստատուեցան իւր այս հայկապ քանաստեղծութեան շարունակաբար նուիրած ուսումնասիրութիւնները:

1865 թ. նորա մեծագոյն տենչն էր մասնակցել Դանտէի 100-ամեակին: որ պիտի տօնուէր Փլորէնցիայում: Սակայն կասկածոտ աւստրիական կառավարութիւնը գոնդօլափարին մերժեց անցագիր տալը: Իսկ այս բանից նա բնաւ չյուսահատուեցաւ: Մէջքին երկու մեծ կապոց: որոնց մէջ ծրարուած էին իւր Դանտէի թղթերը: և գրպանի մէջ էլ «Աստուածային կատակերգութեան» մի հրատարակութիւն՝ նաեւ նախ դէպի Չիոլջիա: Ապա շարունակեց ոտքով գնալ: Մասչիօն իրան ամէն տեղ անուանում էր գինեփաճառ և երեկոյին վերջապէս հասաւ Պօ գետին: նա փճոց լող տալով փոխուել գետի իտալական ափը: Բայց ջրի յորձանքները նորան քշեցին և նորա կեանքին մեծ վտանգ սպառնացին: Այնուամենայնիւ շինողութեամբ նա և մեծամեծ գծարարութիւններով կարողացաւ հասնել ափին—բայց աւաղ: բախտը վերստին բերեց նորան աւստրիական ափը: կորստեան մատնելով նորա բոլոր թղթերը: Աւրեմն նորա ծանապարհորդութիւնը ի գերեւ ելաւ: աւստրիական զինուորները կալանաւորեցին նորան և տարան Ֆէրրարա: Մի ամիս այնտեղ բանտում պահեցին և լաւ խրատելուց յետոյ դարձրին

Վենետիկ: Դանտէի Թորեչեանի անմիջ պատճառով այս անհաճոյ դէպքից յետոյ՝ Անտոնիօ Մասչիօն չընդհատեց իւր ուսումնասիրութիւնների շարունակութիւնը: ոչ այսքան միայն այլ նա կամեցաւ իւր հետազօտութիւնները դասախօսութիւններով հրապարակ հանել: Բայց որպէս զի հանդիսականներ ծափահարութիւններին և նոյն իսկ սուլոցներին վաղօրօք ընդելանայ: մի քանի երեկոյ Մալիբրան թատրոնում ձրի խաղաց անշնան գերեր և վերջապէս 1868-ին Վենետիկում առաջին դաս խօսեց Դանտէի մասին մեծ հասարակութեան առաջ: Եւ համեստ գոնդօլափարի համար այս եղաւ մի կատարեալ փառաւորութիւն: Հետեւեալ տարիներին շարունակեց դասախօսութիւնները իտալական բոլոր մեծ քաղաքներում—Փլորէնցիայում: Միլանում: Տուրինում: Լիւորնոյում ևլն.—և ամէն տեղ մեծ հաւանութիւն գտաւ:

Իւր ժամանակի մեծահամբաւ մարդիկ աշխատում էին նորա հետ ծանօթանալ և իւրեանց յարգանքները ձօնել նորան: Այն ժամանակներում Անտոնիօ Մասչիօն ազգային պարծանք էր:—Եւ յետոյ: 1879 թուականին: իտալական լուսաւորութեան նախարարութիւնը կարգեց նորան Վենետիկ՝ Մարկօ Փոսկորինի անուան նուիրած՝ գիմնադիտի քիլիքո (բարապան): և այս շնչին պաշտօնում մնաց նա մինչև մահը: այսպիսի մարդու համար՝ աւելի պատուաւոր պաշտօն չգտան:

Մովսիսից պաշտպանութիւն: Աւրիշ ոչինչ հարկուոր չէ: բայց եթէ փորը պինդ կապել կամ ճընշած պահել կալանդով (բանդափով): Իտալացի բժիշկ Գալիանտի ասելով: ծովագնացութեան ժամանակ պատահող փորի ջրածգութիւնները ծագում են համակրական կոշուած նեարդի և ստամոքսի հանգոյցների գրգռումից: հետեւապէս ծովախտի ժամանակ ճնշումը ազդեցութիւն պիտի գործէ ստամոքսը գրգռումից պաշտպանելու համար: Վաղուց յայտնի էր: թէ այդ ախտի դէմ փոր կապելը լաւ միջոց է: բայց ոչ որ չգիտէր: թէ կապելը շնորհքով և խորհրդով պիտի կատարուի: այսինքն—յատկապէս միայն ստամոքսի նեարդային հանգոյցները ճնշելով: Այս միջոցի գործածութիւնը թէ ծովախտի ծագումն է արգելում և թէ ըսկըսուած ծովախտը դադարեցնում է:

Արիւն գոպարացնելու հար միջոց: Այդ միջոցն է թանձրացած ոսկրահիւթը: որ կոչոււմ է ժելատին =գոնդոլ: Ազալրի մէջ պէտք է հալեցնել այնքան գոնդոլ: մինչև որ 5—100/0 լուծուած նիւթ ստացուի: Եւ որպէս զի այդ նիւթը վնասակար սաղմերից զերծուցանուի: պէտք է երկու անգամ՝ քառորդ քառորդ ժամ՝ ենթարկել ջրի տաք գո-

լորչիններն կարելի է մէջը նաեւ աւելացնել հականեխիչ գեղ, զոր օր տուրխմատի (չորհայուցած և ապա թանձրացած անգիկի) կամ կարրուխի հեղուկ։ Այդպէս ստացվում է մածուած և թանձր զանգուած, որ գործածելուց առաջ պէտք է եռացող ջրի վերայ հեղուկ դարձնել, նոյն խոկ ներսի գործարանների (չոր օրինակ կանանց ցուերի) արհեստագործութիւնը կարելի է դադարեցնել, եթէ անոնք մատչելի են ճարը սրակելու համար։ Քիմի արհեստագործութեան ժամանակ նախ պէտք է տաք ջրով քիմի խոռոչը լուանալ, ապա մէջը սրակել դոնդողի հեղուկը և վերջապէս քիմի կայնել այդ հեղուկի մէջ թափառած բամբակով, Բայց դոնդողի հեղուկը շատ տաք չպէտք է լինի գործածութեան ժամանակ։

* *

Քննադատական բովանդակ. Քննադատութիւնն այնպիսի անկատար քուն է, երբ որ մարդու գիտակցութիւնը վերացած գոյով՝ հիւանդն այնուամենայնիւ խորհրդաւոր և նպատակի յարմար շարժումներ է կատարում։ Շարժումները հիւանդի կեանքն են յիշեցնում, զոր օր, անտառապահ հրացանով նշանում է երեւակայած գաղտնաբանին կամ հրդեհից փրկուած և ահաբեկուածը՝ գիշերները վեր է կենում, արագ արագ հագնվում է և դէպի պատուհանն է վազում՝ աղաղակելով «այրվում ենք»։ Թայտնի է, որ քննադատութեան փիճակում տեսողութիւնը խիստ թուլանում է, բայց ագոր փոխարէն շոշափութիւնը նորանում է վերին աստիճան, այնպէս որ քննադատիկը աներկիւզ կարողանում է դրօսնել տանիքների եզրների վերայ և ուրիշ աւելի վտանգաւոր տեղերում, Երգ, այս հիւանդութիւնը մինչ ցօրս անբուժելի էր համարվում։ Բայց մնա օրերիս Ալեքսանդրի բժիշկ Հիւրշկորնը՝ գրեթէ պատահաբար՝ գտաւ դարմանը, նորան հրաւիրել էին մի քննադատիկ կնոջ բժշկելու ոչ թէ այդ անբուժելի ակտիւ, այլ թեթեւ կաթուածութիւնից։ Բժիշկը սկսեց վզի ողներին ելեքտրական զօրութիւն տալ, որպէս զի վերացնէ նեարգային կաթուածութիւնը, Հետեւեալ օրը հիւանդապահները դարմանամբ ծանուցին բժշկին, թէ հիւանդը առաջին անգամ տեղում հանգիստ քնեց՝ շատ տարի գիշերաքննութիւններից յետոյ, Եւ շարունակելով միևնոյն դարմանը, բժիշկը հիւանդին խաբաւ ազատեց քննադատութիւնից, այնուհետեւ կարճ ժամանակում ուրիշ շատ քննադատիկներին ևս բժշկեց նոյն պարզ միջոցով։

* *

Ինչպէս եր կոչվում «Կերմակայի ազատիչ» — Հոռմայեցոց պատմագիր Տակիտոսը Գերմանիայի առաջին անունով է փառաւորում այն մարդուն

(liberator hand dubie Germaniae), որին աւանդաբար սկսեցին կոչել Արմինիոս։ Թէ ինչ է նշանակում այս անունը — ուսումնականները տարբեր կերպով են բացատրել, բայց տարակոյ չկայ, թէ այդ անունը ոչինչ անհնգութիւն չի կարող ունենալ գերմանական ձեւակերպի հետ։ Ապա փորձեցին գերմաներէնով մեկնել, զոր օր, Արմինիոս արքայապետ հայտնաբերեց Կրիմի փոխանակ Կրիմեոնոս, Հերմիմեր անունեց, սակայն այս բոլոր լուսարանութիւնները քննադատութեան չեն գիմանում։ — Ինչպէս «Umschau»-ն հաղորդում է, ձեռագիրների արդի քննութիւններից հաստատվում է, որ Արմինիոս ձեռ նոյնչափ է յաճախում անոնց մէջ, որչափ և Արմինիոս ձեռ, Սարաթընը և Ատտիուսը գիւցաղին անուանում են Արմինիոս։ Տակիտոսի տարեգրութեանց մէջ ձեռ անհաստատ է, բայց լաւ ձեռագիրների երեք հատուածներում (I 55, II 88, XI 10) ճշգիւ կարգացվում է Արմինիոս, Գոմինիանի ժամանակ ապրող Գուլիոս Փրոսպերուս սպան, զօրականների ցանկերից մեկի մէջ յիշում է նաև Արմինիոս, և հին աղբիւրներից քաղող Հոստոր Փլորուսը, որ նոյն անունը ի-ով է աւանդել, այժմ լաւագոյն ձեռագիրների վկայութեամբ անշուշտ պէտք է սրբագրուի ե-ձեռով, Արեմն այսուհետեւ մեկնութեան ամենայն նոր փորձը պէտք է տաւելապէս աչքի առաջ ունենայ անուան այս ստուգադոյն ձեռ։

* *

Կար կրելը մի առիւթ է. Ամէն մի երեխայ կը ծիծաղէ, եթէ իրան ասեն, թէ կամ կիմնել էլ մի արհեստ է եղել, որ պէտք է ուսումնասիրուի, որպէս զի գիւղացին մեծամեծ վնասներից զերծ մնայ, Կովը պէտք է լիովին կթուի, որովհետեւ ամենապարտաւոր կաթը վերջն է կթվում, այնպէս որ զոր օր, եթէ առաջ կթուած 172 գրվաքայ կաթը տայ մի գրվաքայ իւղ, վերջին կաթիլների 12 գրվաքան բաւական կը լինի մի գրվաքայ իւղ ստանալու համար, Գանիացի Եօրգէն Պետերսէնը այս առթիւ հետեւեալ հրահանգութիւնն է տալիս. կթելուց առաջ կովը պէտք է ուրախ տրամադրուի, քաղցր խօսքերով փաղաքելով, շփելով և պլն, Կթելու ժամանակ նա հանգստութիւն է սիրում, ուրեմն պէտք է զգուշանալ բարձրաձայն խօսակցութիւնից, աղմուկից, «բայց իրան խիստ հաճելի կը լինի մի լաւ խրախուսիչ երգ» և գործը աւարտելուց յետոյ «կովին պէտք է ընծայել դարձեալ մի քանի անոյշ խօսքեր և գգուանքներ որպէս տրիտուր շնորհած կաթի համար», ապա թէ ոչ նա երբեք չի մոռանում «փոխարինել անգիւրութիւնների զլացումը, ինքն ևս զլանալով շատ կաթ տալը», Նա ասում է, թէ Գանիայում մի միլիոն կթան կով կայ և տալիս են 4000 միլիոն գրուանքայ կաթ։

Ամերիկացւոց օրուայ վեպը:— Ամերիկացիք ամեն կիսամեկին ունենում են մի մի վեպ, որ ի փոստ փառաց են բարձրացնում: անցեալ ամառը այդ պատուին արժանացաւ Զորջ Մորիէրի «Տրիլլը», իսկ այս ամառը տեղը բռնեց Ապպլայնի «Captains courage»: Ինչպէս անցեալներում Մորիէ Տիլեր, այս հեղինակն էլ մօտերումս կորցրեց իւր վաստկած կարողութիւնը: Բայց այդ կորուստը լիովին պիտի վերագառնայ, որովհետեւ իւր հրաշալի վեպը ահագին քանակութեամբ է տարածվում: Հիւսիսային Ամերիկայում: Այսպէս ամենայն արժանիքներ ունի՝ նկարզեր ջլատող աշխատութիւնից յետոյ՝ ցանկալի հանգստութեան ընթերցանութիւն դառնալու համար: Մանկահասակ հերոսը շատ միջիոնաւորի երես առած և ստահակ դաւակ է: Հայրը՝ մայրն ու որդին ճիշտ ամերիկական տիպեր են: Հայրը՝ այն մարդկանցից մէկը, որ իւր յոգեբով համարում և հարստութիւն է ձեռք բերել, բայց բնութամանակ չէ գտնում իւր որդուն գոտախաբելու համար: Պիւրագրգիռ մայրը՝ որ իւր միահատիկ որդուն անգունդն է գլորում, որովհետեւ նորա բուր ուզածները կատարում է: և ինքը պատանին որ ճիշդ ծանապարհ է բռնել անտանելի ճոյլ վէս դառնալու համար:— սոքա ամէնքը սքանչելի նկարագրուած են միայն մի քանի գծերով: Ընթերցանութեան ամէնից զրօսալի մասն այն է. թէ ինչպէս այս մատաղահաս ամերիկացին մի «բաղգաւոր դժբաղդութիւնից» խրատվում է և գերազանց ճարտար մարդ է դառնում:

* * *

Բժշկութիւնն ուսանելու մի նոր միտք:— Ամերիկայի համալսարաններից մէկում եկող կիսամեկին բժշկութեան բաժնի աւարտող ուսանողները պէտք է խոհարարութեան արհեստի վարժութիւն ստանան: Գոսպիտալութեանց ցանկի մէջ այս ճիւղը կոչել են «Practical Dietetics» (առողջութիւնը կազդարարելու գործնական արուեստ): Աւսանողները պարտաւոր են գործանոց - ի (լաբորատորիումի) անդամ գրուել և հիւանդների ու առողջների համար՝ արգանակների, խաչունների, ամիւրանների տեսակներ (խիւս, փափա), տապակածներ և այլն պատրաստելու հմտութիւն ձեռք բերել: Որչափ որ ծիծաղելի թուի այս գործը, այնուամենայնիւ պէտք է համիլիմերի գործնական իմաստութիւնը արժանապէս գնահատել: Անշուշտ գործնական բժշկի համար խիստ կարեւոր է, որ ճշդիւ և յաջողութեամբ հրահանգ փայլ թէ ինչպէս պէտք է պատրաստուին հիւանդի կերակուրները և ինչպէս փոփոխուի կերակուրների ցանկը:

ԿԵՊՐՈՍԻ ԸԶԳ. ՈՐԲԱՆՈՑԻ ԽՆԵՄԵԿԱԼՈՒ-
ԹԵԼՆ ԿՈՂՄԻՑ.

Կիպրոսի Ազգային Կրթարան Ուրբանոցին և անոր տեսուչ պ. Վահան Բիւրքձեանի նկատմամբ՝ Լօնտօնէն մի ամբաստանական թղթակցութիւն հրատարակուած էր Արծաղանքի Յունուար 14/26 թուակիր թերթին մէջ:

Խնամակալութիւնս՝ այդ թղթակցութեան իւրաքանչիւր կէտը մանրակրկիտ քննութեան տոնկոփ և անոնց մասին վստահելի աղբիւրներէ տեղեկութիւններ ստանալով, նոյնպէս ազգային ձեռնհաս իշխանութիւնէ և մինչև իսկ յօդուածին մէջ ի վկայութիւն յառաջ բերուած անձերէ, զրուցութիւններ ընդունած լինելով:

Համոզում գոյացուցած է

Թէ կրթական — որբանոցին զրուցեան և անոր տեսչին մասնաւոր և հանրային գործունէութեանց նկատմամբ Արծաղանքի թերթակցին հաղորդուած տեղեկութիւնները՝ նախանձոտներու կողմէ յերիւրեալ անհիմն և անտեղի զրոյցներ են: և թէ պ. Վահան Բիւրքձեան արժանաւոր կը գտնուի իր վրայ զրուած պատուարեր վստահութեան:

Այս առթիւ Խնամակալութիւնս յատուկ ուշադրութիւն կը հրաւիրէ Կրթական — Ուրբանոցի կանոնադրոյն և առաջին տեղեկագրոյն վրայ, որոնցմէ բացայայտ կը տեսնուի որ սոյն հաստատութիւնն անձնական նկատումներէ անկախ մարմնոց հսկողութեան ներքե կը գտնուի, և մի գոհացուցիչ ուղղութեան վրայ կը ընթանայ, հետեւաբար լիովին արժանի է ազգին բարոյական և նիւթական աջակցութեանը:

Ի ԴԻՄԸՑ ԽՆԵՄԵԿԱԼՈՒԹԵԼՆ

Նախագահ. — Թ. քհնյ. Տ. Ռահահեան
Ատենապետ. — Ն. տ. Գ. Տր. Յարութիւնեանց
Գանձապահ. — Սարգիս Նղիադարեան
Պատուակալ քարտուղար. — Յոհ. Անդրէասեան

